

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վեր. Յարութին Գէորգ Սելիմեան

ԴԱԻԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՒ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ 19-ՐԴ ԴԱՐՈՒ 40-50-ԱԿԱՆ ԹԹ. ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ (Կ. ՊՈԼԻՍ, ՉՄԻՒՌՆԻԱ)

Թ. 00. 05 - «Կրոնի տեսություն և պատմություն»(պատմական գիտություններ)» մասնագիտությամբ

Պատմական գիտություններու թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախօսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՒԱՆ-2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

СЕЛИМЯН АРУТЮН ГЕВОРГОВИЧ

НОВАЯ КОНФЕССИОНАЛЬНАЯ СИТУАЦИЯ И ТЕОЛОГИЧЕСКИЕ ПОНЯТИЯ

ПО МАТЕРИАЛАМ ЕВАНГЕЛИЧЕСКОЙ ПЕЧАТИ 40-50-Х ГГ. 19 В.

(КОНСТАНТИНОПОЛЬ, СМЕРНА)

диссертации на соискание ученой степени кандидата

исторических наук по специальности

9.00.05 «Теория и история религии»

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ս. Ս. Սահակյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Է. Գ. Մինասյան**
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ս. Հ. Հարությունյան**


Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. մարտի 3-ին, ժամը 12:00-ին, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում գործող ՀՀ ԲՈԿ-ի 068 մասնագիտական խորհրդում (հասցե՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենք):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. հունվարի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  **Ս. Յու. Բայան**

Тема диссертации утверждена на ученом совете Богословского факультета Ереванского государственного университета

Научный руководитель: Доктор исторических наук, профессор **А. С. Саакян**

Официальные оппоненты: доктор исторических наук, профессор **Э. Г. Минасян**
кандидат исторических наук, доцент **А. А. Арутюнян**

Ведущая организация: Институт археологии и этнографии НАН

Защита состоится 3 марта 2021 г., в 12:00 на заседании специализированного совета 068 при Богословском факультете ЕГУ (Адрес: г. Ереван, 0025, ул. Абовяна 52, VI корпус ЕГУ).

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ. Автореферат разослан 14 января 2021 г.

Ученый секретарь специализированного совета:

кандидат исторических наук, доцент



А. Ю. Балян

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Վերածնունդի դարաշրջանին տեղի ունեցած ընկերային-քաղաքական ու մշակութային փոփոխությունները իրենց ազդեցությունը ձգեցին կրօնական կեանքին վրայ: Արեւմտաեւրոպական երկիրներու պատմամշակութային կեանքի զարգացման այն շրջանին, երբ միջնադարեան մշակոյթէն անցում կը կատարուէր նոր ժամանակի մշակոյթին, 16-րդ դարուն եւրոպական կարգ մը երկիրներու մէջ սկիզբ առաւ կրօնական շարժում մը, որ յայտնի է «բարեկարգութիւն» անունով: Եւրոպական բարեկարգութիւնը համաշխարհային պատմութեան ամէնէն հետաքրքրական փուլերէն է: Բարեկարգման գաղափարախօսութիւնը մշակեցին աստուածաբաններ Մարթին Լուտերը, Ճան Կալվինը եւ Հուլիոյս Յվինգլին:

Անհրաժեշտ կը նկատենք ընդգծել, որ նման ուսումնասիրութեան նպատակը չի կրնար ըլլալ բարեկարգութեան գաղափարական բովանդակութեան որեւէ գնահատական տալը՝ ըլլայ ան ընկերային-քաղաքական, թէ կրօնական: Մենք կը ստիպուինք ամբողջ ժամանակ գործ ունենալ Բարեկարգման այն կողմերուն հետ, որոնք իրական կրօնական գիտակցութեան կը թուին ծայրամասային ու երբեմն նոյնիսկ զուտ արտաքին: Չէ՞ որ մենք կը ձգտինք միայն անոր, որ աւելի որոշակի ցոյց տանք այն ամբողջ նշանակութիւնը, զոր կրօնական շարժառիթները ունեցած են մեր ժամանակակից յատուկ «երկրային» մշակոյթի զարգացման ընթացքին, որ ձեւաւորուած է իբրեւ արդիւնք անհամար որոշակի պատմական շարժառիթներու փոխգործակցութեան: Մեր հարցը, հետեւաբար, կ'առնչուի միայն հետեւեալին. մեր մշակոյթի բովանդակութեան բնորոշ ի՞նչը կարելի է վերագրել բարեկարգումի ազդեցութեան՝ իբրեւ պատմական պատճառ նկատելով Հայ Աւետարանական Եկեղեցին: Այսպիսով, մենք պէտք է, անշուշտ, սահմանազատուինք այն տեսակէտէն, որուն կողմնակիցները Հայ Աւետարանական Եկեղեցին կը պարփակեն տնտեսական մղումներու շրջագիծին մէջ, իբրեւ իրենց պատմական անհրաժեշտութիւնը:

19-րդ դարուն կրօնի դերի տկարացումին գլխաւոր գործիքը աշխարհականացումն է, բայց տարբեր կրօնական ուղղութիւններու ներկայացուցիչներ, կրօնական համոզումներու տկարացումին զուգընթաց, կը սկսին առաւել հանդուրժողութեամբ վերաբերիլ այլ կրօնական ուղղութիւններու ներկայացուցիչներուն: Նոյնիսկ եթէ եկեղեցականներ այդպէս չէին խորհիր, այնուամենայնիւ, հարկադրուած էին հաւատացեալ հոգիներու հետ հաղորդակցուելու նոր ուղիներ ու եղանակներ փնտռել: Միւս կողմէն՝ հասարակական յարաբերութիւններու մէջ կրօնի կազմակերպիչ գործառոյթի

թուլացումին զուգընթաց՝ համարժեք իշխանություն ունենալու պահանջը մտածողներուն կը յանգեցնէ այն մտքին, թէ հարկատու է յոյսը դնել մարդկային բանականության զորության վրայ, որ առաւել հրատապ դարձուց գիտության զարգացումին պահանջը:

«1776-ը պատմական թուական մըն է, որ ի յուշ կ'ածէ Ամերիկայի պետական անկախ կեանքին սկզբնաւորութիւնը: Բայց այդ սկզբնաւորութիւնը երկար տարիներու դէպքերուն վերաբերմամբ նաեւ վերջայանգ /epilogue/ մըն է: Ճիշդ այդպէս էնաեւ 1846 թուականը մեզի համար», - կը գրեն հայ աւետարանականները եւ կը շարունակեն. «Այդ տարին մեր մէջ ծնունդ առաւ անկախ եւ ինքնաբաւ եկեղեցի մը, որուն ծնանողները զայն անուանակոչեցին «Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի» անունով: Ժամանակի ընթացքին «Հայաստանեայց»ը, դժբախտաբար, կրճատուեցաւ, եւ եղաւ «Հայ» միայն, չենք կարծեր, աւելի քան բառը դիրասահորէն գրելու եւ արտասանելու խորունկ շարժառիթով: Ինչո՞ւ, սակայն, «Հայաստանեայց»: «Հայաստանեայց», որովհետեւ այդ առաջին աւետարանականները ազգին եւ Մայրենի Եկեղեցիին սէրէն երբեք չհրաժարեցան, եւ ոչ ալ անոր թանկագին եւ սրբազան արժէքներէն: Յիրաւի այդ անունին մէջ կը յայտնուի Աւետարանական Շարժումին յատկանշական պատմական ոգին /genius/»: Չնայած որոշ պատմաբաններ աւետարանականներու հրատարակած «Շտեմարան Պիտանի Գիտելեաց» պարբերականի բովանդակութիւնը ազգային չեն համարած, անոր խնդիրները կեանքէն կտրուած դիտելու պատճառով (տե՛ս Ա. Խառատյան, Ա. Հասարակական միտքը Զմիւռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), Եր. 1995, էջ 9):

Աստուածաշունչ կարդալը, ուսումնասիրելը եւ անձնական կեանքին մէջ կիրառելը իւրաքանչիւր հայ աւետարանական հաւատացեալի կարեւորագոյն խնդիրն է: Ի տարբերութիւն կաթողիկէ, ուղղափառ եւ այլ ասանդական եկեղեցիներու, աւետարանականը որպէս հաւատքի հիմք չ'ընդունիր Սրբազան ասանդոյթը: Կարգ մը ուղղութիւններ կտրականապէս կը հերքեն զայն, ուրիշներ կը վերաբերին յարգանքով, սակայն վերապահումով: Սրբազան ասանդոյթին հանդէպ դրական վերաբերմունք արտօնուած է միայն այն պարագային, երբ այն կը բխի Սուրբ Գիրքէն ու չի հակասեր անոր: Ոչ թէ ծիսական պաշտամունքի պարզեցումը կամ արժեզրկումը, այլ միայն այս վերապահումն է պատճառը, որ բազմաթիւ բողոքական եկեղեցիներ ի սպառ կը հրաժարին Սրբազան ասանդոյթէն, ծէսերէն ու արարողակարգերէն:

1840-1850-ական թուականները հայ ազգային ոգիին վերածնության տարիներն էին: Արեւմտահայ մշակութային կեդրոններուն մէջ մտաւորականութիւնը

փորձած է ժամանակի նոր գաղափարներով ուղղութիւն տալ ազգի հոգեւոր զարգացումին: Արեւմտահայ շրջանակներու մէջ հայկական կեանքի ազատականացումի միտումներ ստեղծուած են: Նոյն գաղափարները կը նշեն հայ աւետարանականները. «Ամէնքն ալ ներշնչուած են Աւետարանի ոգիէն»: Հայ Աւետարանական Եկեղեցին վերջապէս կազմակերպուեցաւ հետեւեալ դասնական հիմունքերու վրայ,— կը գրեն Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցոյ հայ գաղափարախօսները:

Արեւմտահայ մամուլը աննախադէպ զարգացում ունեցաւ 1840-ական թուականներուն: Այդ տարիներուն կը զուգարդիպի հայ բողոքականներու գործունէութեան շրջադարձային պահը, երբ «միսիոնարական տան» մէջ կը սկսին պաշտօնապէս կիրակնօրեայ ժողովներ կազմակերպուիլ: 19-րդ դարու 20-30-ական թուականներուն հասարակական կեանքին գործուն մասնակցութիւն կ'ունենան հայ բողոքականները. անոնք կը գործեն Շուշի, Կ. Պոլիս, Ջմիռնիա, Կալկաթա: 19-րդ դարու 20-30-ական թուականներուն ընթացքին Օսմանեան կայսրութեան նկատմամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքականութիւնը եւ ամերիկեան միսիոնարական կազմակերպութիւններու գործունէութիւնը որոշակի դերակատարութիւն ունեցած են արեւմտահայութեան ճակատագիրին մէջ: Միսիոնարներու յայտնութիւնը նոր մարտահրաւէր ստեղծեց Օսմանեան կայսրութեան մէջ: Ամերիկայի Միացեալ Նահանգները կը պահանջէր, որ իր ազդեցութեան ներքոյ գտնուող երկիրները իրենց հասարակութիւնները ձեւափոխեն ամերիկեան արժէքներու հիմքին վրայ: Այդ «բարեկարգութիւնները» նպատակաուղղուած էին տնտեսութեան կայունացման, առողջապահութեան ու բժշկութեան նոր մեթոտներ կիրառելու եւ հասարակութեան շերտերուն մէջ մշակութային փոփոխութիւններ յառաջացնելու: Միսիոնարները մէկ կողմէն, արտաքին աշխարհին տեղեկատուութիւն կը տրամադրէին քրիստոնեաներու վիճակին մասին, միւս կողմէն, անոնք կայսրութեան պետական մարմիններուն մշտապէս պահանջներ կը ներկայացնէին քրիստոնեաներուն լայն ազատութիւններ տրամադրելու մասին: Օսմանեան կայսրութիւն ժամանած առաջին միսիոնարները տպաւորուած էին այն փաստով, որ կայսրութեան բոլոր ժողովուրդներէն հայերն ամէնէն բացն էին բողոքական միսիոնարներու գործունէութեան հանդէպ: Ընդհանուր գաղափարն այն էր, որ գլխաւոր նպատակը պէտք է դառնար աշխարհի բարոյական վերակառուցումը, դպրոցի ու եկեղեցոյ հիմնադրումը, իւրաքանչիւր ընտանիքի համար Աստուածաշունչ կարդալու եւ աղօթելու հնարաւորութեան ստեղծումը, նոր աշխարհի բողոքականութեան արտահանումն ու տարածումը: Միսիոնարներու թարգմանչական, հրատարակչական ու «աւետարանականացման»

գործունեության անելացու անաւ ընդհանուր կրթութեան բնագաւառը: Միսիոնարական դպրոցները կ'ընդգրկէին բոլոր տեսակի կրթական հաստատութիւններ՝ սկսած մանկապարտէզէն մինչեւ աստուածաբանական ճեմարան:

Քրիստոնէական մտածողութիւնը մեր մշակոյթի հիմնաքարն է: Քրիստոսի նշանակութիւնը քրիստոնեաներու համար, առաջին կարգին, որպէս բարոյական օրինակ ծառայելն է: Կրօնը կը դիտարկուի որպէս ինչ որ հոգեւոր ու ներքին բան. արտաքին հարցերը էական նշանակութիւն չունին: Կրօնի առաջնային նշանակումը հաւատացեալին ներքին համոզումներու որոշակի համակարգի ներշնչումն է, ինչպէս, օրինակ, խոնարհութիւն ու հնազանդութիւն առ Աստուած:

Հայ Աւետարանական եկեղեցին անելի քան 170 տարեկան է, իսկ «Շտեմարան պիտանի գիտելեաց» հանդէսը այսօր շուրջ 180 տարեկան է: Հրապարակման ժամանակէն /1839, որուն փոխարինեց «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»ը, 1854, երկշաբաթաթերթ/ մինչեւ վերջ թերթը յատկանշուած է ազգանուէր գործունեութեամբ: Կրօնական թերթերը ի՞նչ ծրագիրով եւ ի՞նչ դեր կատարած են հայ ազգի բարոյական դաստիարակութեան մէջ, ի՞նչ գրական ժառանգութիւն ձգած է կրօնական մամուլը: Ահա հարցեր ու խնդիրներ, որոնք մինչեւ այժմ ըստ արժանւոյն չեն ուսումնասիրուած:

Մեծ է «Շտեմարան պիտանի գիտելեաց» հանդէսի ընդգրկած շառաւիղը՝ ամէնէն առաջ կրօնական, գրական, թարգմանական, այնուհետեւ՝ պատմական, քաղաքագիտական, բնագիտական նիւթերով. ահա ոչ ամբողջական ոլորտներու ցանկը, զոր կ'ընդգրկէ հանդէսը: Ամսաթերթը ընթերցողներու համար կը պարզաբանէ իր ստանձնած խնդիրները, հրամայականն ու նպատակները, որոնց կարգին, ի դէպ, առաջին տեղը յատկացուած է գիտութեան: Հանդէսը գերակշիռ տեղ յատկացուցեր է կրօնադասնաբանական հարցերու, կրթութեան ու լուսաւորութեան, խրատաբանութեան, աշխարհիկ, ազգային խնդիրներու լուսաբանումին, ինչպէս նաեւ գործնական նշանակութեան խնդիրներու:

Հայ մամուլի եւ հասարակական կարծիքի սերտաճումի այդ փուլին /1840-1850-ական թուականներուն/ ընկերային հակամարտութիւններու խորացումին հետեւանքով խիստ սրուած էր գաղափարական-քաղաքական պայքարը: Մամուլը դարձաւ հասարակական-քաղաքական ուղղութիւններու արտացոլման միջոց: Այս շրջանին բուռն գործունեութիւն կը ծաւալէին լուսաւորիչներ Խ. Աբովյանը, Ս. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, նպատակ հետապնդելով կրթել ու լուսաւորել հայ ժողովուրդը եւ զայն հանել իր դարաւոր ընդարմացումէն:

«Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»ը մատչելի ու լայն ասպարէզ կը բանայ ամենազանազան խնդիրներ շօշափելու եւ զանոնք զանգուածներուն հասցնելու համար:

«1839-էն սկսած թանգիմաթի բարեփոխումները որոշ դրական դեր ունեցան Օսմանեան Թուրքիոյ ոչ մահմետական քաղաքային բնակչութեան հասարակական կեանքի աշխուժացման եւ նպաստեցին արեւմտահայերու մէջ լուսաւորական շարժումի ծաւալումին... 1840-ին սկընաւորուեցաւ ազգային պարբերական մամուլը: Այս իմաստով, ժամանակագրական առումով, առաջնութիւնը կը պատկանի «Շտեմարան պիտանի գիտելեաց» պարբերականին» (Ա. Խառատյան, նշուած աշխ., էջ 9): Որովհետեւ նշուած տարիներուն ուրիշ կրօնաթերթեր չկային, ուստի բաւարարուած ենք միայն բողոքական մամուլի տուեալներով՝ նպատակ ունենալով վեր հանելու կրօնական նոր իրավիճակի առաջացումը կիրառելով իւրօրինակ «հայացք ներսէն» սկզբունքը:

Ընդհանուր առմամբ «Աւետաբեր Շտեմարան...» ի նպատակներէն մէկը գործնական նշանակութեան խնդիրներու լուսաբանումն է: Հանդէսը ընթերցողներուն յաճախակի կը յիշեցնէ, որ բնական երեւոյթներու ուսումնասիրութիւնը կրնայ օժանդակ միջոց դառնալ ժողովուրդի բարեկեցութեան ապահովումին համար: Նման ակնարկներու մէջ հանդէսի հոգեւորական հեղինակները խոր ակնածանքով կը խօսին գիտնականներու մասին: Կարելոր է նաեւ, որ ակնարկագիրները կ'աշխատին ճշգրիտ գիտելիքներ տալ՝ առանց հաշիւի նստելու իրենց կրօնական պատկերացումներուն հետ: Հայ աւետարանականները չէին կրնար չնկատել արեւմտեան երկիրներու մէջ կատարուող նոր բարեկարգութիւնները: Հանդէսի ակնարկներու մէջ կը նշեն, որ գիտութեան բարգաւաճումին ու անուանի գիտնականներու յայտնագործութիւններուն շնորհիւ կարգ մը եւրոպական երկիրներու մէջ արագ կը զարգանայ արդիւնաբերութիւնը՝ նպաստելով մարդոց նիւթական ու հոգեւոր վերելքին:

Հանդէսի ըմբռնումին համաձայն՝ դաստիարակութիւնը առաջին կարգին կը նշանակէ կրթութիւն: «Աւետաբեր Շտեմարան...» ը կրթութեան ու դաստիարակութեան մէջ կը տեսնէ ազգին փրկութեան ու կատարելագործումին ճանապարհը: Ազգային կրթութեան խնդիրը յոյժ անհրաժեշտութիւն է. Ազգային կրթութիւն ըսելով՝ «Աւետաբեր Շտեմարան...» ը զայն կ'ընկալէ ոչ միայն բուն իմաստով, այսինքն՝ ազգային ասանդներու վրայ ստացած կրթութիւնը, այլեւ՝ համազգային, համաժողովրդական, ժամանակակից հասկացութեամբ՝ զանգուածային կրթութիւնը, որովհետեւ անհատները կրթութիւնը թէեւ անհրաժեշտ, բայց բաւարար չէ, որպէսզի ազգը հասնի ընդհանուր բարեկեցութեան:

Հայ աւետարանական աստուածաբանները տնտեսական խնդիրներու հանդէպ իրենց դիրքորոշումը ունէին նիւթական բարիքներէն օգտուելու նկատմամբ, տալով միայն բարոյական գնահատական:

«Աւետաբեր Շտեմարան...»ը զգալի ուշադրութիւն կը դարձնէ բարոյական վերածնունդին ու բարեկարգումին: Ան առաջին անգամ կը վերաբերի Եկեղեցւոյ կեանքին ու բարքերուն, այլ ոչ անոր ուսմունքին:

Չգուշաւոր թուացող քաղաքականութեան մէջ ամսաթերթը կը յաջողի լուծել գոյատեւումի թիւ մէկ խնդիրը, ու այդ ձեւով իսկ իր խօսքը կը հասցնէ ընթերցողին: Կը կարծենք, սեփական մշակոյթն ու պատմութիւնը, ազգային գրականութեան ու բանահիւսութեան գոհարները օտար ընթերցողին հասցնելու խնդիրը լաւագոյն քաղաքականութիւնն է որեւէ քաղաքականութեան մէջ, որ նրբօրէն ու մեծ վարպետութեամբ կ'իրագործէր հանդէսը, իր կողմ գրաւելով եւրոպական գիտնականներու եւ մտածողներու ուշադրութիւնը: Այսօր քան երբեւէ հայ մարդու, յատկապէս հայրենի հողին վրայ ապրողին համար հոգեկան ամուր ու հաստատուն նեցուկ է անհրաժեշտ, այնպիսի մարմին, որ պաշտպանէ անոր իրաւունքները առանց շահախնդրութեան եւ հաւատք ներշնչէ ապագայի ու հայրենիքի հանդէպ, մէկ խօսքով՝ ունենայ այն դերակատարութիւնը, զոր կ'իրականացնէր «Աւետաբեր Շտեմարան...»ը:

Կեանքը կազմակերպելու գործընթացին մէջ բացառիկ դեր ունի պարբերական մամուլը, որ նպաստած է տեղւոյն հայութեան միջեւ հաղորդակցման, անոր հոգեւոր զարթօնքին, ամրապնդած է կապը աշխարհի այլ վայրերու մէջ հիմնադրուած հայ համայնքներու հետ, տասնամեակներ շարունակ պահպանած ու փոխանցած է լեզուական եւ պատմամշակութային արժէքներ: «Աւետաբեր Շտեմարան...» հանդէսը իր առջեւ մեծ, սակայն իրագործելի խնդիրներ դրաւ եւ յաջողեցաւ կատարել զանոնք՝ ամէն կերպ ջանալով լուսատրել ազգը:

19-րդ դարու 40-50-ական թուականներուն, ինչպէս արդէն նշեցինք, պոլսահայ հոգեւոր կեանքէն ներս դաւանական նոր իրավիճակի եւ ըմբռնումներու ուսումնասիրութեան ոլորտին մէջ մինչեւ օրս կատարուած աշխատանքները անշուշտ ունին իրենց ծանրակշիռ դերակատարումը: Այդուհանդերձ, քննութեան առնուած թեման տակաւին համապարփակ եւ համակողմանի ուսումնասիրութեան կը կարօտի, որուն ալ ուղղուած է մեր ատենախօսութիւնը եւ յետագայ գիտական ծրագիրը:

Թեմայի ուսումնասիրումով մենք լոյս կը սփռենք շարք մը դաւանական, հոգեւոր-մշակութային, կրօնաբարոյական, ազգային, մարդասիրական նոր ընկալումներու, մօտեցումներու վրայ՝ ըստ ժամանակի մամուլի նպատակային ուղեգիծի, որ իր կարգին հնարաւորութիւն կու տայ ձեւաւորելու այդ ժամանակաշրջանի պոլսահայ հոգեւոր կեանքը ուրուագծելու՝ իր բնորոշ կողմերով եւ առանձնայատկութիւններով:

ԱՏԵՆԱԽՍՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր ատենախօսության ուսումնասիրության թեման է պոլսահայ հոգեւոր կեանքին մէջ 19-րդ դարու 40-50-ական թուականներու դաւանական նոր իրավիճակի եւ ըմբռնումներու ուրուագիծը:

Ուսումնասիրության նպատակն է ըստ պոլսահայ նշուած ժամանակաշրջանի կրօնական մամուլի ուսումնասիրմամբ եւ վերլուծութեամբ տալ պոլսահայ հոգեւոր-մշակութային տիրոյթին մէջ Հայ Աւետարանական Եկեղեցոյ Բարեկարգման ազդեցութեամբ ձեւաւորուած նոր դաւանաբանական մօտեցումներն ու ընկալումները:

Ատենախօսության խնդիրներն են՝

- քննելով պոլսահայ ժամանակի կրօնական մամուլը՝ ուսումնասիրության առնել Բարեկարգութեան ազդեցութիւնը դաւանաբանական համակարգի վրայ,
- ուսումնասիրել այդ շրջանին Հայ Աւետարանական Եկեղեցոյ կազմակերպումը դաւանաբանական հիմքի վրայ, այս ուղեծիրին մէջ հայկական կեանքի ազատականացման միտումներն ու խորացումները,
- լուսաբանել այդ շրջանի կրօնական մամուլի մօտեցումները եւ դրսեւորումները վերոնշեալ խնդիրներու ձեւաւորման եւ լուծման ուղղութեամբ,
- ուրուագծել այդ շրջանին ձեւաւորուած դաւանական նոր իրավիճակը,
- սահմանել դաւանական նոր մօտեցումները՝ ընդգծելով անոնց բնորոշ կողմերը,
- անդրադառնալ այդ շրջանի ւետարանական ազատականութեան, վախճանաբանական աստուածաբանութեան, կրօնաբարոյական ուսմունքներուն, ազգային այլ խնդիրներուն՝ քրիստոնէութեան եւ քաղաքակրթութեան բնաբանին մէջ,
- լուսաբանել կրօնական կարեւորագոյն թերթերու որդեգրած ուղեգիծը բարեկարգութեան հարցերուն:

ԱՏԵՆԱԽՍՈՒԹԵԱՆ ՄԵԹՈՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ատենախօսության մէջ փաստերը հետազօտելու եւ մեկնաբանելու համար, առաւելապէս, կիրառուած են պատմաքննական, համադրական-զուգահրայական, համեմատական փաստերու եւ իրադարձութիւններու յետադարձ քննութեան մեթոտները:

Աշխատանքին մէջ վերանայուած ու վերարժեւորուած են քննարկուող հիմնահարցերու վերաբերեալ առկայ մօտեցումներն ու տեսակէտները, եւ բոլոր տուեալներու ու փաստերու բազմակողմանի քննութեան առ ի արդիւնք առաջարկուած են նոր մօտեցումներ եւ լուծումներ:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ատենախօսութեան թեմայի ուսումնասիրութեան համար ընտրուած է 19-րդ դարու 40-50-ական թուականները: Հայ ազգային ոգիի վերածնութեան այս շրջանին, արեւմտահայ մշակութային կեդրոններուն մէջ հայ մտաւորականութիւնը փորձած է նոր գաղափարներով ուղղութիւն տալ ազգի հոգեւոր զարգացման ի խնդիր: Հայ Աւետարանական Եկեղեցին վերջապէս կը կազմակերպուի դաւանական հիմունքներու վրայ, ինչպէս նաեւ հայկական կեանքի ազատականացման միտումները կը խորանան: Նոյն գաղափարները կը նշեն հայ աւետարանականները. «Ամէնքն ալ ներշնչուած են Աւետարանի ոգիէն»: Յիսուս Քրիստոսը՝ քրիստոնէական աշխարհի բարձրագոյն հեղինակութիւն: Այս ուղղութեամբ ուսումնասիրութեան ծանրակշիռ աղբիւր է, այդ շրջանի պարբերական մամուլը, գլխաւորապէս՝ կրօնական թերթերը:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՅԹՆ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ատենախօսութեան էջերուն մէջ հայագիտութեան, հայ եկեղեցագիտութեան պատմութեան մէջ, առաջին անգամ կը կատարուի 19-րդ դարու 40-50-ական թուականներու պոլսահայ հոգեւոր կեանքին մէջ հայ դաւանական նոր իրավիճակի եւ ըմբռնումներու հետազօտութիւն՝ տուեալ ժամանակի կրօնական մամուլի ուսումնասիրութեան հիմքով: Գլխաւոր գիտական նորոյթը այն է, որ քննութեան կ'առնուին Հայ Աւետարանական Եկեղեցոյ արդէն դաւանական հիմքի վրայ կազմուած բոլոր նախադրեալները, տիրող պայմանները եւ զայն յանգեցնող պատճառները ժամանակային ուղեծիրէն ներս:

Ատենախօսութիւնը ունի նաեւ ճանաչողական եւ կիրառական նշանակութիւն: Ատենախօսութեան առանձին դրոյթներ ու եզրակացութիւններ կրնան գործնական եւ կիրառական նշանակութիւն ունենալ բուհական կրթական համակարգին մէջ՝ Հայ Եկեղեցոյ ուսումնասիրութեան ուղղուած դասընթացներու կրթական ծրագիրներուն, ինչպէս նաեւ մամուլի, գլխաւորապէս կրօնական պատմութեան ուսումնասիրութեան գործին մէջ: Ուսումնասիրութիւնը կրնայ ունենալ նաեւ գիտագործնական նշանակութիւն. վերջինիս դրոյթներու լոյսին ներքոյ կարելի է

վերանայիլ եւ նորովի ուսումնասիրել այդ շրջանի պոլսահայ հոգեւոր կեանքին մէջ դասնական որոշ մօտեցումներ եւ ըմբռնումներ:

Ատենախօսութեան ճանաչողական արժէքը նաեւ պայմանաւորուած է ո՛չ միայն բուն ւսետարանչական եկեղեցւոյ համապատասխան էջերու լուսաբանմամբ, այլեւ քանի մը զուգահեռ նոր երետյօներու սկզբնատրման մասին տեղեկութիւններով: Յատկապէս կ'արժէ նշել, որ 19-րդ դարու երկրորդ կէսի ընթացքին հայ հասարակական կեանքին մէջ գրաբարի եւ աշխարհաբարի կողմնակիցներու միջեւ գրապայքարը իր սկունքներով կը յանգի «Շտեմարան պիտանի գիտելեաց»ի գործունէութեան՝ փաստելով որ աշխարհաբարի եւ անոր հիման վրայ ստեղծուած նոր գրական հայերէնի ջատագովները ւսետարանական են:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Ատենախօսութիւնը քննարկուած եւ հրապարակային պաշտպանութեան երաշխաւորուած է Երեւանի պետական համալսարանի Աստուածաբանութեան ֆակուլտետի Աստուածաբանութեան ամպիոնին կողմէ: Ուսումնասիրութեան կարեւոր դրոյթները արտացոլուած են հեղինակին հրատարակած 6 յօդուածներուն մէջ, ինչպէս նաեւ շարք մը միջազգային եւ հանրապետական գիտաժողովներուն եւ սեմինար-քննարկումներուն ներկայացուած ելոյթներուն մէջ: Հրատարակուած գիտական յօդուածներու ցանկը ներկայացուած է սեղմագիրին վերջաւորութեան:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

(ՍԿԶՔՆԱՂՔԻՐՆԵՐՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

Ատենախօսութիւնը շարադրելու ընթացքին մեր կողմէն օգտագործուած նիւթերը կարելի է բաժնել հետեւեալ խումբերու՝ աստուածաշնչեան բնագրեր, պարբերական տպագիր մամուլ (կրօնական եւ ոչ կրօնական), հայերէն եւ օտարալեզու ուսումնասիրութիւններ, յօդուածներ, հրապարակումներ:

Որպէս սկզբնաղբիւր՝ ըստ թեմայի ուսումնասիրութեան պահանջներու, առաջնային կարեւորութիւն տուած ենք տուեալ ժամանակաշրջանին, եւ ոչ միայն, կրօնական մամուլի ուսումնասիրութեան ու հետազօտութեան:

Ուսումնասիրած ենք հայալեզու «Շտեմարան պիտանի գիտելեաց» պարբերականը, «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց», «Բազմավէպ» եւ «Արձագանք» հանդէսները:

«Շտեմարան պիտանի գիտելեաց» պարբերականը հոգեւոր-կրօնական եզակի կազմակերպութիւն մըն էր, որ հանգամանքներու բերումով ծառայութիւններ մատուցեց ան եւ «աշխարհիկ մշակոյթին»՝ պարագծելով եւ ուղեցոյց դառնալով

կեանքի ամենաբազմազան՝ գրականության, հայագիտության, պատմագրության, աշխարհագրության, երկրագործության եւ այլուրտներու մէջ: Դիւրին չէր այդ խնդիրը, մանաւանդ եթէ նկատի առնենք, որ Հայ Աւետարանական եկեղեցին, որպէս կրօնական կառոյց, կարիք չունէր ի յայտ գալու զանազան «խորթ» ասպարէզներու մէջ:

Հայ Աւետարանական հաւատքի յայտարարութիւններուն, ինչպէս նաեւ հաւատքի հանգանակին անդրադառնալով, օգտուած ենք հալէպահայ պատմաբան, պատմական գիտութիւններու դոկտ. Երուանդ Քասունիի Հայաստանեայց աւետարանական եկեղեցին ուսումնասիրութենէն (Պէյրուս, 1986): Կոստանդնուպոլսոյ Հայ Աւետարանականները իրենց հաւատքի առաջին հանգանակը հրապարակեցին 14 Յունուար 1946-ին, երբ տակաւին պաշտօնապէս գոյութիւն չունէր Հայ Աւետարանական եկեղեցի կամ Համայնք: 12 Յունուար 1846-ին, Մատթէոս Պատրիարքը պաշտօնական յայտարարութեամբ նզոված է բոլոր աւետարականները: Սակայն անոնք պատրիարքին դէմ ապստամբութեան չեն դիմած: Անոնք յայտարարած են իրենց հաւատքի հանգանակը՝ ապացուցելով որ իրենք հերետիկոս չեն: Այս ուղղութեամբ ժանդակող եղած են Քասունիի միւս աշխատանքները եւս («Քննական տեսութիւն հայ աւետարանականութեան պատմութիւնը օղակահիսող դէմքերու եւ եղելութիւններու (1828-1922)», Պէյրուս, 2009, Պատմութիւն հայ աւետարանական շարժման, Պէյրուս, 1947):

Ատենախօսութիւնը շարադրելու ժամանակ, օգտուած ենք Ստ. Փայասյանի աշխատութենէն, ուր հիմնարար կերպով տեղեկութիւններ կը տրուին Արեւմտեան Հայաստանի մէջ միսիոներներու հաստատման, անոնց առաջին կայաններուն եւ գործունէութեան ոլորտներուն վերաբերեալ: Հեղինակը իր ուսումնասիրութեան մէջ ներկայացուցած է միսիոներներու գործունէութիւնը ո՛չ միայն Արեւմտեան Հայաստանի մէջ, այլեւ Օսմանեան Թուրքիոյ միւս հայաբնակ վայրերուն, որոնց շարքին էր նաեւ Կիլիկիան: Բարեկարգութեան գաղափարախօսութեան քննութեան անդրադառնալով, որպէս աղբիւր ծառայած են գերմանացի աստուածաբան Մարտին Լիւթերի, ֆրանսացի աստուածաբան Ժան Կալվինի, եկեղեցական բարենորոգիչ եւ քաղաքական գործիչ Ուրիխ Յվինգլիի աշխատութիւնները:

Պոլսահայ համայնքի քրիստոնեայ փոքրամասնութիւններու ուսումնասիրութեան ուղղութեամբ, անհրաժեշտաբար օգտուած ենք նաեւ աստրիացի պատմաբան, աստուածաբան Ուիլիելմ Բաւմի ուսումնասիրութենէն:

Ամերիկեան միսիոներներու գործունէութեան անդրադարձած է նաեւ խորհրդահայ պատմագիտութիւնը:

Ուշագրաւ տեղեկութիւններ կան նաեւ Բիւզանդ. Եղիայեանի «Հայ կաթողիկ եւ ատետարանական հարանուանութեանց բաժանումը ԺԹ. Դարում» գրքին մէջ (Անթիլիաս, 1971):

Ամերիկեան բողոքականներու գործունէութեան հիմնական ուղղութիւններուն նուիրուած ամերիկացի միսիոներ Դ. Էդդիի աշխատութիւնը՝ Արեւմտեան Հայաստան հաստատուած միսիոներական կայաններու պատմութեան վերաբերեալ (Eddy D.B., What Next in Turkey, Boston, 1913): Հետաքրքրական փաստեր կը պարունակէ նաեւ Զ. Բարթոնի աշխատութիւնը, ուր կը ներկայացուի ամերիկեան Խորհուրդի գործունէութիւնը (Barton J. L. D., Daybreak in Turkey, Boston, 1908): Միսիոներական գրականութեան մէջ առանձնայատուկ տեղ կը գրաւեն այն աշխատութիւնները, ուր հեղինակները անդրադարձած են Արեւմտեան Հայաստանի մէջ որեւէ գոլէճի կամ դպրոցի հիմնադրման պատմութեան (Hamlin, C., My Life and Times, 2 nd ed., Boston, 1893, Washburn G., Fifty Years in Constantinople and Recollection of Robert College, Boston, 1909, Knapp G.H., The Tragedy of Bitlis, New York, 1919):

Անդրադարձած ենք նաեւ այդ շրջանի պոլսահայ մամուլի ընդհանուր ուրուագիծին: Պոլսահայ մամուլի պատմութեան վերաբերեալ գոյութիւն ունին արժէքաւոր ուսումնասիրութիւններ: Այդ ուսումնասիրութիւններէն հարկ է առանձնացնել Գ. Լետոնեանի, Գր. Գալեմբարեանի, Գ. Զարբահանլեանի, Վ. Զարգարեանի, Ա. Ալպօյաճեանի, ԹէոդիկիեւԼ. Չորմիսեանի աշխատութիւնները:

Խնդրոյ առարկայ թեմային շուրջ արժէքաւոր եւ օգտակար են Ալ. Խառատյանի մենագրութիւնները եւ յօդուածները:

Բնականաբար, թեմայի ուսումնասիրութեան ուղղութեամբ յատուկ կարեւորութիւն ունի նաեւ Վեր. Ս. Իփօնեանի «Ծագումն եւ Ընթացք Աւետարանականութեան Ի Հայս» գիրքը:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Ատենախօսութիւնը կազմուած է ներածութենէ, երեք գլուխէ՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացութիւններով եւ օգտագործուած աղբիւրներու ու գրականութեան ցանկէ:

ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆ մէջ հիմնաւորուած է ընտրուած թեմայի գիտական նշանակութիւնն ու արդիականութիւնը, նպատակն ու խնդիրները, ներկայացուած է աշխատանքի գիտական նորոյթը, տրուած է օգտագործուած սկզբնաղբիւրներու ու գրականութեան տեսութիւն:

Ինչպես նաև ներածության մէջ անդրադարձ կատարուած է պատմական այն նախապայմաններու ընդհանուր բնութագրման, պատճառներու եւ հանգամանքներու լուսաբանման, որոնց հետեւանքով կը ստեղծուին նախադրեալներ դաւանական նոր իրավիճակի ձեւաւորման պոլսահայ հոգեւոր կեանքին մէջ:

Առաջին գլուխը՝ **«ԵՒՐՈՊԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆ ՈՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒ. 40-ԱԿԱՆ ԹԹ.»**, բաղկացած է երեք ենթագլուխէ: Առաջին ենթագլուխին մէջ՝ **«ՀՈԳԵՒՈՐ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ»**, քննարկած ենք Բարեկարգութեան գաղափարախօսութիւնն ու գաղափարախօսներու տեսութիւնները, անդրադարձած բողոքականութեան դաւանաբանութեան՝ հինգ դրոյթներուն:

15-րդ եւ 16-րդ հարիւրամեակները վճռական եղած են քրիստոնէական Արեւմուտքի համար, որ յաջողած է զարգացման մէջ ոչ միայն հասնիլ միւս մշակոյթներուն, այլեւ գերազանցել զանոնք: Այդ շրջանին կը վերաբերին Եւրոպայի հիւսիսը արագ տարածուած իտալական Վերածնունդը, Նոր Աշխարհի բացայայտումը եւ գիտական յեղափոխութեան սկզբնաւորումը, երեսոյթներ, որոնք բախտորոշ դարձան ամբողջ աշխարհին համար: «Վերածննդի դարաշրջանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական ու մշակութային փոփոխութիւններն իրենց ազդեցութիւնը թողեցին նաև կրօնական կեանքի վրայ: 16-րդ դարում եւրոպական մի շարք երկրներում՝ Գերմանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Հոլանդիայում սկիզբ առաւ կրօնական հզօր մի շարժում, որը յայտնի է «Ռեֆորմացիա» («բարեկարգութիւն») անուամբ»:

Բարեկարգութեան գաղափարախօսութիւնը մշակեցին աստուածաբաններ Մարթին Լուտերը /1483-1546/, Ճան Կալվինը /1509-1564/ եւ Ու. Յվինգլին /1484–1531/:

Լուտերականութեան մէջ ձեւակերպուած են բողոքականութեան հիմնական սկզբունքները՝ «միայն հաւատով», առանց հոգեւորականութեան եւ եկեղեցւոյ միջնորդութեան Աստուծոյ հաղորդակցուելով փրկուելու գաղափարը /«Վասն զի շնորհքով փրկուած էք դուք հաւատքի միջոցով, եւ այս՝ ո՛չ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ պարգէն է: Ո՛չ թէ գործերէն, որ մէ՛կը չպարծենայ» /Եփես. 2.8-9/:

Անդրադարձած ենք Լուտերի եւ Կալվինի՝ հոգեւորի վերաբերեալ տեսական մօտեցումներուն:

Ինչպես նաև տեսական քննութեամբ ներկայացուցած ենք բողոքականութեան դաւանաբանութեան հինգ դրոյթները՝ մարդկայնութեան եւ բարեկարգութեան

երկու հոսանքներու միջեւ մօտեցումներու լուսաբանմամբ եւ հինգ ոլորտներու ներկայացմամբ:

Երկրորդ ենթագլուխին մէջ՝ «**ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ**», ի մի բերած ենք եւ ներկայացուցած Հայ Աւետարանական շարժումը, աւետարանականներու գործունէութեան շրջադարձային փուլը, բողոքականութեան քարոզչական պատմութեան, Կոստանդնուպոլսոյ եւ Օսմանեան կայսրութեան մէջ միսիոներական նոր «հարթութեան», ինչպէս նաեւ կրօնական առաջատար թերթերու գաղափարական ուղեգիծերը: Այս ենթագլուխին մէջ անդրադարձած ենք նաեւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ դաւանական կազմակերպման բնորոշ կողմերուն:

Այսպէս՝ Հայ Աւետարանական Եկեղեցին վերջապէս կազմակերպուեցաւ հետեւեալ դաւանական հիմունքներու վրայ՝ կը գրեն Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցւոյ հայ գաղափարախօսները,— «(ա) Երրորդութիւնը միայն պաշտամունքի առարկայ պիտի ըլլայ. (բ) Աւետարաններու ոգիին եւ տառին հետ չեն համաձայնիր աճիւններու, խաչի, եւ պատկերներու գործածութիւնը. (գ) մարդ ի բնէ մեղանշական է եւ Աստուծոյ վերածննչ զօրութեան կարօտ, եւ Բանին քարոզութիւնն է ազդուագոյն միջոցն որով այդ զօրութիւնը կրնայ հաղորդուիլ ենթակային. (դ) Աստուածաշունչը հաւատքի եւ կեանքի միակ առաջնորդն ու կանոնն է. (ե) Քրիստոս է եկեղեցիին միակ Գլուխը, Փրկիչը, եւ Բարեխօսը, եւ մեղաց քաւութեան միջոցը. (զ) փրկութիւնը հաւատքով կը գործուի եւ ոչ թէ բարի գործերով, կամ ծոմապահութեամբ, կամ ողորմութեամբ, կամ ապաշխարագինով. (է) սուրբ կեանք մը ապացոյց է փրկութեան. (ը) ճշմարիտ քրիստոնեաներու որեւէ խմբակցութիւնը Յիսուս Քրիստոսի եկեղեցին կը կազմէ. (թ) խորհուրդները երկուք են՝ Մկրտութիւն եւ Հաղորդութիւն»:

Ամփոփելով այս ենթաթեման՝ կրնանք ըսել, Հայ աւետարանական շարժումին տարածման առ ի արդիւնք կը ծեաւորուին Հայ Աւետարանական Եկեղեցւոյ դաւանական նոր հիմքերը:

Օսմանեան կայսրութիւն ժամանած առաջին միսիոնարները տպաւորուած էին այն փաստով, որ կայսրութեան բոլոր ժողովուրդներէն հայերը ամէնէն բացն էին բողոքական միսիոնարներու գործունէութեան հանդէպ: Ընդհանուր գաղափարն այն էր, որ գլխաւոր նպատակը պէտք է դառնար աշխարհի բարոյական վերակառուցումը, դպրոցի եւ եկեղեցւոյ հիմնադրումը, իւրաքանչիւր ընտանիքի համար Աստուածաշունչ կարդալու եւ աղօթելու հնարաւորութեան ստեղծումը, նոր աշխարհի բողոքականութեան արտահանումն ու տարածումը:

Երրորդ ենթագլուխին մէջ՝ «ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ԿՐՕՆԱԹԵՐԹԸ», յատուկ ուսումնասիրութեան նիւթ դարձուցած ենք արեւմտահայոց առաջին կրօնաթերթը, ներկայացուցած ենք անոր միջոցով դաւանական, կրօնաբարոյական նոր ուղղութիւններու ձեւաւորումը պոլսահայոց հոգեւոր կեանքին ներս, ինչպէս նաեւ լեզուական խնդիրներու արծարծումը: Իզուր չէ, որ մամլոյ պատմաբանը կը նկատէ. «Ընթերցողին մատչելի լինելու մտահոգութիւն... ունէին նաեւ ամերիկեան բողոքական միսիոներները: Նրանք դեռեւս 1830-ական թթ. սկզբին ձեռնարկեցին աշխարհաբար գրքերի հրատարակութիւնը...» (Ա. Խառատյան, Նշուած աշխ., էջ 73-74):

1830-1840-ական թուականները հայկական իրականութեան մէջ ազգային ոգիի վերածնութեան տարիներ էին: «...Աշխարհայեացքի ու հասարակական մտքի կազմաւորումին նպաստել է մամուլը, հրատարակուել են թերթեր, ամսագրեր («Լոյ գիր» (1832, Կոստանդինուպոլիս), «Շտեմարան պիտանի գիտելեաց» (1839, Զմիւռնիա), «Ազդարար Բիւզանդեան» (1840), «Արշալոյս Արարատեան» (1840, Զմիւռնիա), «Բազավէյ» (1843, Վենետիկ), «Ազգասէր» (1845, Կալկաթա), «Կովկաս» (1846, Թիֆլիս), «Եւրոպա» (1847, Վիեննա), «Բանասէր» (1848, Մատրաս)»: Ազգային զարթօնքին նպաստած են նաեւ համաշխարհային պատմական իրադարձութիւնները, յեղափոխական շարժումները:

Նշուած ժամանակահատուածին մէջ Զմիւռնիայի ու Կ. Պոլսոյ մէջ մեծ դերակատարութիւն ունէին հայ պարբերական մամուլի լաւագոյն օրկանները, որոնցմէ մէկն էր Իզմիրի մէջ լոյս տեսնող «Շտեմարան պիտանի գիտելեաց» հանդէսը: Այս պարբերականի դերակատարումը մեծ էր գրապայքարի հիմքերը դնելու գործին մէջ, ուր առանց բանավէճեր մղելու՝ ուղղակիօրէն կիրառուեցաւ աշխարհաբար լեզուն:

Անդրադարձած ենք գլխատրապէս ամերիկեան բողոքականներու պարբերականներուն՝ իրենց դաւանական ուղղուածութիւններու ներկայացմամբ:

Ինչ կը վերաբերի ամերիկեան բողոքականներու հրատարակութիւններուն՝ «Շտեմարան պիտանի գիտելեաց» /Զմիւռնիա, 1839-1854/, «Աւետաբեր»/ Կ. Պոլիս, 1855-1915/, «Աւետաբեր մանկանց» /Կ. Պոլիս, 1908-1915/ եւ այլ պարբերականներու, ապա անոնց դաւանական ուղղուածութիւնը կրթութեան, դաստիարակութեան եւ լեզուի ասպարէզին մէջ, միանգամայն յստակ է: Այդ մասին Հ. Աճառյանը, նշելով բողոքական մամուլի միանշանակ դրական վաստակը լեզուին մէջ, կը գրէ՝ «Առաջին անգամ լեզուի մաքրութեան վրայ ուշադրութիւն է դարձնում Զմիւռնիոյ անդրանիկ հայ թերթը՝ «Շտեմարանը», որ ամերիկեան միսիոնարների հրատարակութիւնն էր: Այսպէս, ուրեմն, բողոքական միսիոնարները դուրս են

գալիս մեր մէջ իբրեւ աշխարհաբար լեզուի կանոնաորութեան ու կոկուելուն առաջին պատճառ. եւ նորանցից յետոյ սկսում են օրից օր շատանալ հայ թերթերը «աշխատելով հետզհետէ մաքրել ու պատրաստել աշխարհիկ նոր գրական լեզուն»:

Երկրորդ գլուխը՝ «ՍԻՐՈՅ, ՅՈՅՍԻ ԵՒ ՄԵՂՔԻ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԱՆԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՅՑ ՄԷՋ» բաղկացած է երկու ենթագլուխներէ: Առաջին ենթագլուխին մէջ՝ «ՍԵՐՆ ՈՒ ՅՈՅՍԸ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ», քննած ենք «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»ի մէջ սիրոյ ընկալումներու եւ դրսետումներու մասին թերթի մօտեցումները: Առանցքային են Աստուծոյ սէրը եւ Աստուծոյ նկատմամբ սիրոյ թեմաները, ինչպէս նաեւ աւետարանչական գաղափարի իրական բովանդակութիւնը այս թեմատիկ ուղղութիւններով: Անկասկած, Յիսուսին սէրը կը զատորոշուի որոշակի ծայրայեղականութեամբ, կը նշեն աւետարանականները, սակայն այդ ծայրայեղականութիւնը կիրք չէ, չափաւորուած չէ որեւէ այլ կիրքով, այլ միայն Աստուծոյ նուիրուածութեան ծայրայեղականութիւն է, որու չի խառնուիր որեւէ այլ բացարձակ բարիքի ձգտում: Յիսուսի այդ առաքինութիւնը անհամաչափ է միայն բազմաստուածային-միաստուածային իմաստով, այլ ոչ թէ այն, որ անոր չեն զուգակցուիր միւս առաքինութիւնները, որոնք, թերեւս, նոյնքան մեծ են: Յիսուսին համար չկայ բացարձակ սիրոյ արժանի այլ էակ, բացարձակ երկրպագութեան այլ առարկայ չկայ, քան Աստուած. Ան Հայրն է, չկայ Աստուծմէ բացի այլ բարիք, անհրաժեշտ է միայն Անոր երախտագիտութիւն յայտնել, միայն Անոր արքայութիւնն է անհրաժեշտ փնտտել: Յիսուսը նախընտրեց Հայր բառը: Միայն Յիսուս կը խօսի Հօր մասին, Որու կրնայ հաղորդ ըլլալ իւրաքանչիւր մարդկային հոգի, եթէ կամենայ:

Այսպիսով՝ պարբերականը հետեւեալ բանաձեւով կը սահմանէ սիրոյ, Աստուծոյ, մարդու հանդէպ սիրոյ ընկալումները. «Աստուծոյ նկատմամբ սէրը միակ ճշմարիտ բարիքի երկրպագութիւնն է, երախտագիտութիւնը՝ ընծաներ ընողին, Սրբութեան ուրախութիւն, «Գոյութեան ընդունում»: Իսկ մարդու նկատմամբ սէրը լեցուած է աւելի շատ խղճահարութեամբ, քան երկրպագութեամբ, աւելի շատ տուող ու ներող է, քան երախտագիտութեամբ լեցուն: Այդ սէրը կը տառապի մարդկային արատաւորութենէն ու անիրաւութենէն, համաձայն չէ մարդիկը ընդունիլ ինչպէս որ են, այլ անոնց ապաշխարանքի կոչ կ'ընէ: Աստուծոյ հանդէպ սէրը անշահախնդիր տիեզերական էրոս է, մարդու հանդէպ սէրը՝ մաքուր ազգայէ. Աստուծոյ նկատմամբ սէրը՝ կիրք, իսկ մարդու նկատմամբ սէրը՝ կարեկցանք: Հոս երկակիութիւն “Dualism” կայ, սակայն ոչ երկու մեծ արժէքներու՝ Աստուծոյ եւ մարդու նկատմամբ, երկու նմանատիպ կապուածութիւններու միջեւ հակասութեան իմաստով: Աւելի

շատ այդ Մարդու Որդիին եւ Աստուծոյ Որդիին երկակիութիւնն “Dualism” է, որ սիրեց զԱստուած, ինչպէս Անոր պէտք է սիրէ մարդը, եւ սիրեց մարդը, ինչպէս կրնայ ընել միայն Աստուած՝ մեռնողի նկատմամբ մեծագոյն խղճահարութիւն զգալով»:

Երկրորդ ենթագլուխին մէջ՝ **«ՄԵՂՔԸ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ»**, ուսումնասիրութեան ենթարկած ենք պարբերաթերթին մէջ մեղքի, մեղսագործութեան ւետարանչական ընկալումները: Անդրադարձած ենք մեղաւորութեան, բարոյական չարիքի քրիստոնէական մեկնաբանութիւններուն: Յառաջդիմական՝ ինչպէս նաեւ հայ ւետարանական քրիստոնէութեան մէջ գոյութիւն ունի ենթադրութիւն, թէ մարդ ի վիճակի է կատարելու ւետարանական պահանջները: Կանտի «պարտաւոր եմ, կը նշանակէ կարող եմ» հաստատումը հիմք կ'ընդունուի բարոյական վիճակի վերլուծութեան համար: Իսկ դասական քրիստոնէութեան մէջ ւետարանական պահանջներու կատարումը մարդու հնարաւորութիւններու տեսանկիւնէն աւելի բարդ խնդիր է: Սիրոյ պատուիրանը հակադրուած է մեղսաւորութեան փաստին: Ըստ էութեան՝ ան կ'օգնէ արթնցնել մեղսաւորութեան գիտակցումը /Ա Յովի. 2:12/:

Մեղսագործութեան մասին առասպելը բարոյական եւ կրօնական ուսմունքներու մէջ իր մեծագոյն ներդրումն ունեցած է ոչ թէ կարգի ու քառսի յարաբերութեանց մասին զուգորդուած ընկալումներով, այլ մարդկային բնութեան իրականութեան իր մեկնաբանութեամբ: Չարը չ'ընկալուիր պարզապէս աշխարհի ւարտականութեան հետեւանք կամ բնական անհրաժեշտութեան պտուղ: Մեղքն անհնար է հասկնալ ո՛չ լոկ մարդկային բանականութեան ազատութեան, ո՛չ մարդու մարմնի սահմանափակ ներդաշնակութեան համաթեքստերու մէջ: Մեղքը կը գտնուի ոգիի ու բնութեան հանգոյցին՝ այն նոյն իմաստով, ինչով մարդկային հոգեւորութեան իւրայատուկ ու բացառիկ գիծերը կրնան հասկացուիլ միայն մարդու կեանքին մէջ ազատութեան ու անհրաժեշտութեան կամ վախճանականութեան ու յաւերժութեան ծարաւի միջեւ յարաբերութիւններու վերլուծութեան միջոցով:

Վերջին՝ երրորդ գլուխը՝ **«ՀՈԳԵՒՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ»**, բաղկացած է երեք ենթագլուխներէ:

Առաջին ենթագլուխին մէջ՝ **«ԱԶԱՏ ՄԱՐԴՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ»**, բովանդակային վերլուծութեան ենթարկած ենք մարդու ազատականութեան տեսութիւնը՝ ըստ ւետարանչական դաւանաբանութեան: Ուսումնասիրութեան առնուած է Սուրբ Կաթողիկէ Եկեղեցին՝ որպէս նոր մարդկային համայնք:

Յատուկ քննարկումի նիւթ դարձուցած ենք քաղաքակրթութեան եւ քրիստոնէութեան յարաբերակցութեան հարցը՝ «մարտնչող եկեղեցւոյ» ռազմավարութեան դիտարկմամբ:

Ամփոփելով նիւթը՝ նշենք, որ ուժը եւ գրաչութիւնը, որոնցմով օժտուած է Յիսուս մարդոց նկատմամբ, երբեք չեն ելլեր միայն Իրմէ, այլ կը բխին Իրմէ՝ որպէս Հօր Որդիէն: Ատոնք կը բխին Անկէ Իր Որդիութեան մէջ՝ երկու եղանակով. իբրեւ Աստուծոյ մէջ ապրող մարդ է եւ իբրեւ մարդոց մէջ գտնուող Աստուծմէ: Անոր նկատմամբ հաւատը եւ Անոր գործի նկատմամբ հաւատարմութիւնը մարդիկը կը ներգրաւեն այդ երկակի շարժումին մէջ՝ աշխարհէն դէպի Աստուած եւ Աստուծմէ՝ դէպի աշխարհ: Նոյնիսկ այն ժամանակ, երբ աստուածաբանութիւնը այդ դուրս կը ձգէ տեսադաշտէն, Քրիստոսի հետ իրենց մշակոյթներու գիրկը գտնուող քրիստոնեաները այդ կը գիտակցին:

Երկրորդ ենթագլուխին մէջ՝ «**ՀՈԳԵԻՈՐ ՄՇԱԿՈՅԹԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ**», կատարելով բովանդակային ուսումնասիրութիւն՝ համապարփակ ներկայացուցած ենք պարբերականներու տեսական մօտեցումները հոգեւոր մշակոյթի սահմանման վերաբերեալ: Ինչպէս նաեւ քննութեան ենթարկած ենք մշակոյթը՝ որպէս մարդկային ձեռքբերման կատարեալ ամբողջութիւն, իսկ հոգեւոր մշակոյթը՝ հոգեւոր կատարելագործութեան ամբողջութիւն:

Յատուկ անդրադարձ կատարած ենք աստուածաբանական գիտակարգի՝ մշակոյթի սահմանումի բնորոշ կողմերուն:

Մշակոյթը, որ այժմ կը դիտարկուի ըստ աւետարանականներուն, չի կրնար ուղղակի որոշակի հասարակութեան մշակոյթ ըլլալ, ինչպէս յունահռոմէական, միջնադարեան կամ ժամանակակից արեւմտեան կարգ մը աստուածաբաններ, ինչպէս եւ մարդաբաններ, քրիստոնէական հաւատը արեւմտեան մշակոյթի անբաժանելի մաս կը համարեն:

Այսպիսով՝ պէտք է նշենք, որ թուարկուած եւ ուրիշ շատ ազգային գործիչներու անունները այդ ժամանակաշրջանին յաճախ կը հանդիպին «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»-ի էջերուն մէջ՝ երբեմն անոնցմէ կատարուող թարգմանութիւններով, երբեմն՝ գրական ընդհանուր տեսութիւններու մէջ: Ահա այսպիսի գրական, քաղաքական, կրօնական միջավայրի մէջ կը գործէր աւետարական եկեղեցին 19-րդ դարու 40-50-ական թուականներուն, եւ անոր հրատարակած լրագիրը կամայ-ակամայ անտարբեր չէր կրնար ըլլալ երկրին մէջ կատարուող իրադարձութիւններուն, հասարակական տրամադրութիւններուն, մանաւանդ բազմաթիւ էին քաղաքական, ընկերային այն խնդիրները, որոնք նման էին ամբողջ Հայաստանի մէջ տիրող իրավիճակին:

Երրորդ ենթագլուխին մէջ՝ «ԿՐՕՆ, ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ԴԱՏՏԻԱՐԱՎՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ», քննութեան ենթարկած ենք քրիստոնէական ընկալումները ազգի, կրօնի, դաստիարակութեան, կրթական համակարգին շուրջ: Առանցքային է ազգի եւ մշակոյթի նոյնականացման գաղափարական մօտեցումը, իսկ վերոնշեալ հարցերը իւրաքանչիւր ժողովուրդի հոգեւոր մշակոյթի տարբերակիչ յատկանիշներն են, մեր պարագային՝ «հայկական գաղափարաբանութեան հիմք»:

Այս վերջին ենթագլուխին մէջ, լուսաբանած ենք նաեւ հասարակական հոսանքներու բովանդակութեան սկզբունքային կողմերը, կրօնական պարբերականներու անդրադարձը այս թեմատիկ ուղղութեամբ: Կրօնը, ազգասիրութիւնը, դաստիարակութիւնը եւ կրթութիւնը հայրենասիրութեան հասկացութեան հետ նոյն արժէքով կը դիտարկուին այս պարբերականներուն մէջ: Ինչպէս, օրինակ՝ ըստ «Աւետաբերի... » ազգասիրութիւնը /նոյնն է թէ՛ հայրենասիրութիւնը/ ամենեւին բնական զգացում չէ, ինչպէս ընդունուած է կարծել: «Ազգասիրութիւնը ճշմարիտ է որ Աստուածային յայտնութիւնով եղած կրօնքին առաջնորդութեանը կարօտ է, եթէ ոչ օգտակար ըլլալուն տեղը՝ կործանող սկզբունք մը կ'ըլլայ:

Այսպիսով, կարելի է ըսել, որ ամերիկեան միսիոներներու քարոզչութիւնը Օսմանեան կայսրութիւն բերաւ ամերիկեան քաղաքակրթութեան հոգեւոր եւ բարոյական որոշակի արժէքներ: Ան հնարաւորութիւն ընձեռեց հայ ժողովուրդին իր բողոքի ձայնը հասցնել եւրոպական դիւանագիտութեան լայն շրջանակներ: Անժխտելի է յատկապէս այդ դժուար ժամանակներուն մէջ բողոքական միսիոներներու լուսաւորական աշխատանքներու կարեւորութիւնը օսմանահպատակհայութեան շրջանին մէջ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ մէջ տրուած են ատենախօսութեան հիմնական արդիւնքներն ու եզրայանգումները.

1. 1840-1850-ական թուականները հայ ազգային ոգիի վերածնութեան տարիներ էին: Արեւմտահայ մշակութային կեդրոններու մէջ մտաւորականութիւնը փորձած է ժամանակի նոր գաղափարներով ուղղութիւն տալ ազգի հոգեւոր զարգացումին: Հայ Աւետարանական Եկեղեցին վերջապէս կը կազմակերպուի դաւանական հիմունքներու վրայ եւ կը խորանան հայկական կեանքի ազատականացման միտումներ: Նոյն գաղափարները կը նշեն հայ աւետարանականները՝ «ամէնքն ալ ներշնչուած են Աւետարանի ոգիէն»:

2. Արեւմտահայ մամուլը աննախադէպ զարգացում ապրեցաւ 1840-ական թուականներուն: «Շտեմարան պիտանի գիտելեաց» հանդէսը հրապարակման ժամանակէն /1839/, որու փոխարինեց «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»ը /1854/ մինչեւ վերջ աչքի կը զարնէ ազգանուէր գործունէութեամբ: Հանդէսը գերակշիռ տեղ կը յատկացնէ կրօնա-դասանաբանական հարցերուն, պատմաբանասիրութեան, գրական գործերուն, կրթութեան ու լուսաւորութեան, խրատաբանութեան, աշխարհիկ, ազգային խնդիրներու լուսաբանումին, ինչպէս նաեւ գործնական նշանակութեան խնդիրներու: «Շտեմարան պիտանի գիտելեաց» ամսաթերթի կարեւորագոյն ու արմատական խնդիրը լեզուն էր: Լեզու, որ ոչ միայն հաղորդակցութեան միջոց է մարդոց միջեւ, այլեւ ժամանակի ընթացքին կուտակուած գիտելիքներու եւ մտածողութեան շտեմարան: Ամսաթերթը օգտագործեց գրական հայերէնի ժամանակային դրսեւորումները՝ սկսած գրաբարէն, արեւմտահայ աշխարհաբարէն, ներառելով նաեւ ռամկական-բանահիւսակական տարրերը:

3. 19-րդ դարու 30-40-ական թուականներու ընթացքին Օսմանեան կայսրութեան նկատմամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքակա-նութիւնը եւ ամերիկեան միսիոնարական կազմակերպութիւններու գործունէութիւնը որոշակի դերակատարութիւն ունեցած են արեւմտահայութեան ճակատագրի մէջ: Միսիոնարներու յայտնութիւնը նոր «հարթութիւն» ստեղծեց Օսմանեան կայսրութեան մէջ: ԱՄՆ-ը կը պահանջէր, որ իր ազդեցութեան ներքոյ եղող երկրները իրենց հասարակութիւնները ձեւափոխեն ամերիկեան արժէքներու հիմքի վրայ: Այդ «բարեկարգութիւնները» նպատակաւորուած էին տնտեսութիւններու կայունացումին, առողջապահութեան ու բժշկութեան նոր համակարգեր կիրառելուն եւ մշակութային փոփոխութիւններ ներմուծելու հասարակութիւններուն մէջ: Միսիոնարները արտաքին աշխարհին տեղեկատուութիւն կը տրամադրէին քրիստոնեաներու վիճակին մասին, միւս կողմէն, մշտապէս պահանջներ կը ներկայացնէին կայսրութեան պետական մարմիններուն՝ քրիստոնեաներուն լայն ազատութիւններ տրամադրելու մասին:

4. Աւետարանական ազատականութիւնը բոլոր զգացումներէն վեր կը դասէ սէրը: Միւս բոլոր նորկտակարանային թեմաները, բոլոր դարաշրջաններու քրիստոնեաներու վկայութիւնները կը հաստատեն, որ սէրը Յիսուս Քրիստոսի մեծագոյն առաքինութիւններէն է: Յիսուսի համար չկայ բացարձակ սիրոյ արժանի այլ էակ, բացարձակ երկրպագութեան այլ առարկայ, քան Աստուած: Յիսուսը միայն սիրոյ եզրոյթներով նկարագրելու միտումը ներքուստ կապուած է զԱստուած եւ սէրը նոյնացնելու նախատրամադրուածութեան հետ: Հայրութիւնը կը դիտուի

որպես Աստուծոյ թերեւս միակ անկապտելի յատկանիշը: Քրիստոս սիրեց մերձաւորը ո՛չ այնպէս, ինչպէս զինք, այլ այնպէս, ինչպէս Ջայն կը սիրէ Աստուած: Հոսկէ Յիսուսի աշակերտներուն համար կը պարզուի, որ մարդոց նկատմամբ Յիսուս Քրիստոսի սերը ոչ թէ ուղղակի տիեզերական պատկառանքի ցուցադրում է, այլ աստուածային ազապէ-սիրոյ վճռական արտայայտում: Աստուծոյ նկատմամբ սէրն անշահախնդիր տիեզերական էրոս է, մարդու նկատմամբ սէրը՝ մաքուր ազապէ: Վախճանաբանական աստուածաբանութեան կողմնակիցները փորձած են Յիսուս Քրիստոսի գլխաւոր առաքինութիւնը պատկերացնել յոյսը, այլ ոչ թէ սէրը: Անոնք կը պնդեն, որ Յիսուս այնպէս կ'ապաւինէր մեծ պատմական շրջադարձի մեսիական խոստումի իրականացումին, որ պէտք է վերջնականապէս յաղթահարէր չարը եւ հաստատէր Աստուծոյ Արքայութիւնը, որ Անոր համար ոչ մէկ բան նշանակութիւն ունէր՝ բացի այդ իրադարձութեան պատրաստուելէն:

5. Հայ աւետարանական քրիստոնէութեան մէջ գոյութիւն ունի ենթադրութիւն, թէ մարդ ի վիճակի է կատարել աւետարանական պահանջները: Էմանուէլ Քանթի «պարտաւոր եմ, կը նշանակէ կարող եմ» հաստատումը հիմք կ'ընդունուի բարոյական վիճակի վերլուծութեան համար: Իսկ դասական քրիստոնէութեան մէջ աւետարանական պահանջներու կատարումը մարդու հնարաւորութիւններու տեսանկիւնէն աւելի բարդ խնդիր է: Սիրոյ պատուիրանը հակադրուած է մեղսաւորութեան փաստին: Ըստ էութեան՝ այն կ'օգնէ արթնցնել մեղսաւորութեան գիտակցումը: Մեղսագործութիւնը աշխարհի արարումէն յետոյ առանցքային իրադարձութիւնն է:

6. Քաղաքակրթութեան ու քրիստոնէութեան յարաբերակցութեան հարցը ամենեւին նոր չէ, քրիստոնէութեան հակասութիւնները այս ոլորտին մէջ մշտնջենական են եւ երեւան եկած են անոր գոյութեան ամբողջ ընթացքին: Անոնք, որ Քրիստոսի ու քրիստոնեաներու մէջ մշակոյթի թշնամիներ կը տեսնեն, յաճախ անոնց դէմ այլ մեղադրանքներ կը բերեն: Կ'ըսեն, որ գթասրտութիւնը, որով կը գործէ Քրիստոս եւ զոր կը քարոզուի մեզի եւս, չի համապատասխաներ արդարադատութեան պահանջներուն, ազատ մարդու բարոյական պատասխանատուութեան գիտակցութեան: Թէեւ Քրիստոսի ու քրիստոնեաներու դէմ նման մեղադրանքները կ'ընդգծեն ու կը բացայայտեն խնդիրին էութիւնը, իրականութեան մէջ քրիստոնէութեան առաջադրանքը նման յարձակումներէ պաշտպանուիլը չէ: Ոչ միայն Քրիստոսը մերժած հեթանոսները, այլեւ Անոր անվերապահ հաւատացողները բախուած են դժուարութիւններու, երբ փորձած են Անոր պատուիրանները համադրել իրենց քաղաքացիական պարտականութիւններուն հետ: Միւսներու համար մշակոյթը անաստուած է բացասական

իմաստով՝ որպես Աստուծոյ դէմ ուղղուած կռապաշտութիւն: Ոմանց համար ալ այն Աստուծոյ եւ Անոր օրէնքը հասկնալու միջոց է: քրիստոնէական անկանխակալութիւնը կ'արգիլէ սահմանումներէն որեւիցէ մէկու ընդունումը: Մշակոյթը, որ այժմ կը դիտարկուի ամետարանականներու կողմէ, չի կրնար ուղղակի որոշակի հասարակութեան մշակոյթ ըլլալ, ինչպէս յունահռոմէական, միջնադարեան կամ ժամանակակից արեւմտեան կարգ մը աստուածաբաններ, ինչպէս եւ մարդաբաններ քրիստոնէական հաւատքը արեւմտեան մշակոյթի անբաժանելի մաս կը նկատեն:

7. Արեւելքի քրիստոնէաներուն եւ նոր քաղաքակրթութեան գալուստին սպասողներուն կը հետաքրքրէ ոչ միայն արեւմտեան Քրիստոսը, այլեւ ան, որուն կարելի է առանձնացնել իր նկատմամբ արեւմտեան հաւատէն, որ կեանքի համար նշանակութիւն ունի այլ մշակոյթներու մէջ: Այդ պատճառով մշակոյթը ոչ թէ մասնաւոր, այլ ընդհանուր երեսոյթ է, թէեւ կ'արտայայտուի միայն որոշակի ձեւերով, թէեւ արեւմտեան քրիստոնէան չի կրնար այդ խնդիրի մասին մտածել այլ ձեւով, քան արեւմտեան մշակոյթի եզրոյթներու մէջ: Հետեւաբար հարց կը ծագի, թէ ինչու արեւմտեան մշակոյթը չդիտարկել իբրեւ քրիստոնէութեան ծնունդ, ընդհանրապէս, որքան ալ այդ տեսակէտը կը հակասէ կարգ մը տեսաբաններու սկզբունքներուն:

8. Մշակոյթը «երկրորդային, արհեստական շրջակայ միջավայրն է», զոր մարդը կը դնէ առաջնային բնութեան վրայ: Այդ «հասարակական ժառանգութիւնը», այդ «*sui generis* իրականութիւնը», զոր նկատի ունէին նորկտակարանային հեղինակները՝ խօսելով տարբեր ձեւերու մէջ արտայայտուող «աշխարհի» մասին, որուն մէջ անխուսափելիօրէն կը մտնեն ե՛ւ քրիստոնէաները, ե՛ւ մնացեալ մարդիկ, յատկապէս այն է, ինչ նկատի ունինք մշակոյթ ըսելով, եւ ինչին յատուկ են կարգ մը կարեւոր յատկանիշներ:

«Շտեմարան պիտանի գիտելեաց» պարբերականը հոգետոր-կրօնական եզակի կազմակերպութիւն էր, որ հանգամանքներու բերումով ծառայութիւններ մատուցեց նաեւ «աշխարհիկ մշակոյթին»՝ պարագծելով եւ ուղեցոյց ըլլալով կեանքի ամենաբազմազան՝ գրականութեան, հայագիտութեան, պատմագրութեան, աշխարհագրութեան, երկրագործութեան եւ այլ ոլորտներու մէջ:

9. Մշակոյթը հոգետոր կեանքի յարաբերութեամբ հանդէս կու գայ որպէս իրացուած եւ առկայ մտքի անհրաժեշտ ատաղծ, որպէս բովանդակութիւն: Այսինքն, որպէս մտքի ատաղծ՝ մշակոյթը նախադրեալ է, իսկ միտքն այն է, ինչ որ կը ստեղծեն. մտածողութիւնը այդ ձեւով կը դառնայ մշակոյթի կազմաւորումի եղանակ: Այլ խօսքով՝ մշակոյթը մտաւորական հայեացք է ուղղուած

իրականութեան՝ այդ իրականութիւնը կատարելագործելու մղումով: Իսկ քրիստոնէութիւնը, մասնատրապէս ւսետարանական ըմբռնումով, որ յաճախ կը տարփողողի «Շտեմարան պիտանի գիտելեաց»ի էջերուն մէջ, այլ բան չէ, քան մարդու եւ իրականութեան կատարելագործման վարդապետութիւն: «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»ը գիտէ, որ միանգամայն տարբեր բնոյթ եւ ուղղուածութիւն ունին «աշխարհիկ» ու «հոգեւոր» գրուածքները, սակայն անոր նպատակը ոչ թէ միայն հաւատքի հոգեւոր խորհրդի տարփողումն է /ատոր համար այլ միջոցներ ու եղանակներ կան/, այլ ազգին օգտակար իմացութիւններ տալը:

10. Աւետարանականները կտրուած չէին իրենց ժամանակէն եւ անմիջապէս կ'արձագանգէին դարաշրջանի առաջադրած թէ՛ հոգեւոր-բանասիրական, թէ՛ տնտեսական, թէ՛ բնագիտական, առիթի պարագային՝ անգամ քաղաքական խնդիրներուն: Այս հանգամանքը կը կարեւորենք նաեւ այլ իմաստով. հայ ւսետարանականներու ժառանգութիւնը սովորաբար քննուած ու գնահատուած է մեկուսի՝ նոյնիսկ փորձ չընելով զայն ուսումնասիրել եթէ ոչ համաւերոպական, ապա գոնէ հայ իրականութեան մակարդակով:

Հայ Լուսաւորականութիւնը առանձնապէս աչքի չէր զարներ համարձակութեամբ կամ արմատականութեամբ: Լուսաւորականները սովորաբար կը խուսափէին սուր ընկերային, քաղաքական, տնտեսական խնդիրներ շօշափելէ: Անոնց հայեացքները աչքի կը զարնէին ընդգծուած պահպանողականութեամբ: Նշուած յատկանիշներու ցուցումով կը փափաքինք ընդգծել հայ ւսետարանականներու, մասնատրապէս՝ «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»ի դիրքորոշումներու ընդհանուր ուղղութիւնը. հանդէսը պահպանողական էր ոչ միայն այն պատճառով, որ հրատարակիչները հոգեւորականներ էին, այլեւ այդպիսին էր Պոլիս տիրող հասարակական ու քաղաքական մթնոլորտը: Այսինքն, «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»ի հետաքրքրութիւնները մեծաւ մասամբ համահունչ էին Պոլիսի մտայնութիւններուն:

11. 1840-1850-ական թուականներուն հայ ժողովուրդի քաղաքական ու տնտեսական զարգացումին հիմնահարցը առաջնահերթ նշանակութիւն ստացաւ: Հասարակական հոսանքները հայ իրականութեան մէջ արտայայտած են որոշակի ընկերային խումբերու աշխարհայեացքային պատկերացումներ ազգի կացութեան եւ անոր զարգացումի հեռանկարներու նկատմամբ: Հայ գործիչներու մէկ մասը կը կարծէր, թէ օսմանեան ու ռուսական ճնշումներուն դիմակայելու համար անհրաժեշտ է պահպանել ազգին ասանդոյթները, լեզուն ու կրօնը:

Այսուհետ ազգասիրութիւն եւ հայրենասիրութիւն հասկացութիւնները «Աւետաբերի... » բառապաշարին մէջ հոմանիշներ են: Սակայն կան նաեւ այլ

տարբերակումներ՝ ըսենք, մարդասիրություն եւ ազգասիրություն, որոնք ոչ թէ հակոտնեաներ են, այլ սիրոյ աստիճաններ: Ան նախ եւ առաջ դաստիարակութեան խնդիր է:

12. Դաստիարակութիւնը հանդէսի ըմբռնմամբ առաջին կարգին կը նշանակէ կրթութիւն: Դաստիարակութիւնը ամենալուրջ նիւթն է, որ կրնայ արծարծել որեւէ հանդէս: Այդ նախ եւ առաջ ազգային խնդիր է եւ մեծագոյն հոգաճութիւն կը պահանջէ: Իրենց նախաձեռնած կրթական հաստատութիւններու միջոցով ամերիկացի միսիոնարները նպաստեցին հայերու կրթական գործին,— կը նկատէ հայ աւետարանականը:— Հազարաւոր հայ երիտասարդներ իրենց բարձրագոյն ուսումը ստացան ամերիկացի միսիոնարներու բացած բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու մէջ:

Դաստիարակութիւնը ոչ միայն ազգային խնդիր է, այլեւ տնտեսական ու քաղաքական: Դաստիարակութիւնն ու կրթութիւնը նաեւ ընկերային խնդիր են: «Աւետաբեր... »ը կրթութեան ու դաստիարակութեան մէջ կը տեսնէ ազգին փրկութեան ու կատարելագործումին ճանապարհը:

13. Ազգային կրթութեան խնդիրը յոյժ անհրաժեշտութիւն է եւ ապացոյցներու հարկ չունի: Ազգային կրթութիւն ըսելով՝ «Աւետաբեր... »ը կ'ընկալէ ոչ միայն բուն իմաստով, այսինքն՝ ազգային ասանդներու վրայ ստացած կրթութիւնը, այլեւ ատոր համազգային, համաժողովրդական, ժամանակակից հասկացութեամբ՝ զանգուածային կրթութիւնը, որովհետեւ անհատներու կրթութիւնը թէեւ անհրաժեշտ, բայց բաւարար չէ, որպէսզի ազգը հասնի ընդհանուր բարեկեցութեան: Յատկապէս դպրոցին մէջ կրթութիւն ստանալու կարեւորումը «Աւետաբեր... »ին համար նոյնպէս պատճառաբանուած է զուտ մանկավարժութեան տեսանկիւնէն. դպրոցը սաներուն կ'օգնէ ոչ միայն կեանքի բազմաթիւ հանգամանքներու մէջ ճիշդ կողմնորոշուելու, այլեւ ուղեցոյց է «հարկաւոր ու օգտակար» գիրքերու ընտրութեան եւ «ինչպէս կարդալու» հարցերով:

Ատենախօսութեան հիմնական դրոյթները ներկայացուած են հեղինակին հետեւեալ հրապարակումներուն մէջ.

- 1) Սելիմեան Յ., Եկեղեցոյ ազատականացման միտումներ արեւմտահայ աւետարանական շրջանականներու մէջ, Կանթեղ. գիտական հոդուածներ 1(74), «Ասողիկ» հրատարակչութիւն, Եր., 2018, էջ 113-123:

- 2) Սելիմեան Յ., Մշակոյթին եւ կրօնին փոխարարբերման հարցը հայ աւետարանական եկեղեցոյ մէջ, Կանթեղ. գիտական հոդուածներ 2(75), «Ասողիկ» հրատարակչութիւն, Եր., 2018, էջ 146-157:
- 3) Սելիմեան Յ., Շտեմարան Պիտանի Գիտելեացը եւ իր «յայտարարութիւն»ը, Հայկազեան Հայագիտական հանդէս, Հայկազեան Համալսարանի Հրատարակչատուն, Պ., 2018, էջ 757-765:
- 4) Սելիմեան Յ., Դաստիարակութեան ու կրթութեան հարցերը «Աւետարեր»ում, «Բանբեր Երեւանի Համալսարանի Բանասիրութիւն» 3/2019, Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, էջ 83-92:
- 5) Սելիմեան Յ., Արեւմտահայ աւետարանական շարժման ակունքները, Հայագիտական հանդէս № 3 (45), Խաչատուր Արովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարան, Եր., 2019, էջ 142-157:
- 6) Սելիմեան Յ., Հայ Աւետարանական շարժման սկզբնաւորումը Օսմանեան Թուրքիոյ մէջ, Լրաբեր հասարակական գիտութիւնների, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, Եր., 2020, էջ 158-167:

Арутюн Селимян

**НОВАЯ КОНФЕССИОНАЛЬНАЯ СИТУАЦИЯ И ТЕОЛОГИЧЕСКИЕ
ПОНЯТИЯ ПО МАТЕРИАЛАМ ЕВАНГЕЛИЧЕСКОЙ ПЕЧАТИ 40-50-Х ГГ. 19 В.
(КОНСТАНТИНОПОЛЬ, СМЕРНА)**

РЕЗЮМЕ

Диссертация посвящена освещению новой теологической ситуации и анализу особенностей ее восприятия по материалам издававшейся в Смирне и Константинополе в 40-50-х гг. 19 в. евангелической печати. Исследование осуществлено в контексте религиозной печати указанного времени, при этом рассмотрены и выделены также общие характерные направления в евангелизме в данный исторический период.

В “**Введении**” обоснована актуальность исследуемой темы, представлены основная цель, научная новизна, практическое значение, использованные источники и обзор литературы. В Введении отражены также общая характеристика исторических условий, которые послужили предпосылкой для формирования новой ситуации в богословии.

Исследование может иметь научно-практическое значение: в свете изложенных в нем положений могут быть *пересмотрены или заново изложены* существующие представления о духовной жизни константинопольских армян, а отдельные положения могут иметь практическое и прикладное значение для системы высшего образования – при преподавании курса истории Армянской церкви, а также в деле исследования религиозной печати, поскольку познавательная ценность диссертации обусловлена не только освещением соответствующих страниц собственно евангелической церкви, но и сведениями о некоторых имевших место в то же время событиях.

Следует особо отметить, что борьба между сторонниками грабара и ашхарабара в армянском обществе во второй половине 19 в. восходит своими корнями к «Штемаран и Аветабер», а это свидетельствует о том, что поборниками ашхарабара и созданного на его основе нового литературного армянского языка были евангелисты.

Первая глава **“ЕВРОПЕЙСКИЙ ПРОТЕСТАНТСКИЕ РЕФОРМЫ И ЗАПАДНО-АРМЯНСКИЕ ЕВАНГЕЛИСТЫ В 40-х гг. 19 в.”** состоит из трех разделов. В первом разделе – **“ДУХОВНЫЕ ИСТОКИ”** обсуждаются идеология благоустройства и теории ее идеологов, рассматриваются пять положений протестантизма.

Во втором разделе – **“АРМЯНСКОЕ ЕВАНГЕЛИЧЕСКОЕ ДВИЖЕНИЕ”** обобщены армянское евангелическое движение, переломный этап в деятельности евангелистов, история протестантского миссионерства, константинопольская община, появившееся в Османской империи новое миссионерское “пространство”, а также идейно-содержательные ориентиры прогрессивных религиозных газет. В этом разделе отражены также характерные стороны теологического формирования Армянской евангелической церкви.

Вторая глава **“ВОСПРИЯТИЕ ЛЮБВИ, НАДЕЖДЫ И ВИНЫ В АРМЯНСКОЙ ЕВАНГЕЛИЧЕСКОЙ ЦЕРКВИ”** состоит из двух разделов. В первом разделе – **“ЛЮБОВЬ И НАДЕЖДА В ВОСПРИЯТИИ ГАЗЕТЫ”** исследуется отношение газеты «Штемаран и Аветабер» к восприятию любви и ее проявлениям. Основными являются темы любви Бога и любви к Богу, как и истинное содержание идеи евангелизма в данной тематике.

Во втором разделе – **“ГРЕХ В ВОСПРИЯТИИ ПЕРИОДИЧЕСКОГО ИЗДАНИЯ”** исследуется отношение изучаемой газеты к восприятию евангелистами греха, греховности. Рассматриваются христианские толкования греховности, нравственного вреда и зла.

Последняя, третья, глава “**ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ДУХОВНО-КУЛЬТУРНОЙ И НАЦИОНАЛЬНОЙ ЖИЗНИ**” состоит из трех разделов.

В первом разделе – “**НРАВСТВЕННАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ СВОБОДНОГО ЧЕЛОВЕКА**” содержательному анализу подвергнута теория либерализма согласно евангелическому богословию. **Отмечается новый аспект рассмотрения церкви Св. Католике, как новой человеческой общины.** Особое внимание уделено вопросу взаимоотношения цивилизации и христианства в свете стратегии “борющейся церкви”.

Во втором разделе – “**ВОСПРИЯТИЕ ДУХОВНОЙ КУЛЬТУРЫ**” всеобъемлюще представлен теоретический подход периодической печати к определению духовной культуры. Также дан анализ духовной культуры во всей своей целостности, как человеческое достояние. Специально выделено определение культуры с точки зрения теологического миропонимания.

В третьем разделе – “**РЕЛИГИЯ, ПАТРИОТИЗМ, ВОСПИТАНИЕ И ОБРАЗОВАНИЕ**” дан анализ христианскому пониманию нации, религии, воспитания и системы образования. Особо подчеркнут идейный подход к отождествлению нации и культуры, а указанные вопросы являются отличительной характеристикой любого народа, в данном случае это “основа армянской идеологии”.

В этом разделе освещены также принципиальные стороны общественных движений и отражение этой тематики в периодической религиозной печати. В этих изданиях религия, любовь к нации, воспитание и образование рассматриваются как понятия, равноценные патриотизму.

В конце диссертации приведено **Заключение**, а также представлена **использованная литература**.

Harutyun Selimyan

The New Confessional Situation and Understanding According to the Armenian Evangelical Print Media in the 40s-50s of the 19th Century (Constantinople, Smyrna)

Summary

The dissertation is devoted to examining and illustrating the peculiarities of the new confessional situation and understanding according to the Armenian Evangelical print

media published in Smyrna and Constantinople in the 40s & 50s of the 19th century. The study was conducted in the context of the religious print media presentation of the period, observing and highlighting the general characteristic outlines of this period in the history of the Evangelicals.

The introduction part of the dissertation introduces the relevance of the topic being studied, presents the main purpose of the work, the scientific novelty, the applied meaning, the theory of the sources and bibliography used. The introduction part also deals with the general characterization of the historical preconditions and the circumstances that give rise to the creation of a new confessional situation. The study may be of scientific and practical significance. In the light of its provisions, the perceptions of the spiritual life of Constantinople may be revised or redefined, and certain points and conclusions may have practical implications for the higher education system in the curriculum of Armenian Church history courses, as well as in the study of religious print media history, because the cognitive value of the thesis is also conditioned not only by the coverage of the corresponding pages of the Evangelical Church itself, but also by some parallel with the emergence of new phenomena. It is particularly noteworthy that during the second half of the 19th century, the struggle between the advocates of the classical & contemporary Armenian, together with its sources, within Armenian public life stems from the activity of the "Cradle of good Science" journal, proving that the advocates of the new Armenian literary based on the contemporary are the Evangelicals.

The first chapter titled, "***The European Reformation and Western Evangelicals in the 40s of the 19th Century***", consists of three subsections. In the first subsection, "***Spiritual Origins***", the ideology of reformation and theories of ideology, as well as the five points of Protestant doctrine are discussed.

The second subsection titled, "***The Armenian Evangelical Movement***", summarizes and presents the Armenian Evangelical movement, the turning point of the Evangelical activity, the history of the Protestant preaching, the Constantinople community, the new missionary flatness (preface) opened in the Ottoman Empire, and the ideological-content guidelines of leading religious newspapers. This chapter also touches upon the confessional specific aspects of the Armenian Evangelical Church.

The second chapter titled, "***The Concept of Love, Hope and Sin in the Armenian Evangelical Church***", consists of two subsections. The first subsection titled, "***Love and***

Hope According to the Journal," examines the newspaper's approaches to love perceptions and manifestations in the "Avedaper & Cradle of Good Science", which is axial to "God's love and love for God" topics, as well as the actual content of the Evangelical concept in the given thematic areas.

The second subsection titled, ***"The Concept of Sin According to the Journal"***, examines the Evangelical perceptions of sin and sinfulness in the journal. Christian references to sin, moral harm, and evil are touched upon.

The third chapter, "The Spiritual-Cultural and National Life Issues", consists of three subsections. The first subsection titled, ***"Moral Responsibility of a Free Human"***, has a content analysis of the theory of human liberty according to Evangelical doctrine. The Holy Catholic Church is being studied as a new human community. The question of the relationship between civilization and Christianity is being examined with a view to the "militant church" strategy.

In the second subsection, ***"The Perception of Spiritual Culture"***, the theoretical approaches are presented by conducting a substantive study in a comprehensive manner. The chapter also examines culture as the perfect set of human achievement, and spiritual culture as the set of spiritual perfection. Special reference is made to the specific aspects of the theological discipline, the defining aspects of culture.

The third subsection titled, ***"Religion and Nationalism, Education and Proper Upbringing"***, examines the Christian perceptions of the nation, religion, upbringing and education system. The ideological approach to the identification of nation and culture is central, and the above issues are distinctive features of the spiritual culture of each nation, in this case "the basis of Armenian ideology."

In this last subsection, the main aspects of the content of the public currents, as well as the coverage of religious periodicals in this topic have been enlightened. Religion, Nationalism, upbringing, and education are similar to the notion of patriotism in these periodicals.

The conclusions of the dissertation as well as the bibliography are presented by the PhD. candidate at the end of the study.

